ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 179-Ա

05 ՆՈՅԵՄԲԵՐ 2021Թ

ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով Վայոց ձորի մարզի Արտաբույքի միջնակարգ դպրոցի կառավարման միացյալ խորհրդի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 3-ի /մուտք ՆՄ-8552-2021/գրությունը և Վարդան Մելիքսեթյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի նոյեմբերի 8-ից Վարդան Մելիքսեթյանին նշանակել «Վայոց ձորի մարզի Արտաբույնքի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:
2. 2021 թվականի նոյեմբերի 8-ից Վարդան Մելիքսեթյանին ազատել տնօրենի պարտականությունների կատարումից:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման- ընդունման աշխատանքները:

4. Հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

11/5/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ նոյեմբերի 5-ի
N179-Ա որոշման

ՀՀ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Գաբրիելյան Ավագ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Անդամներ՝ Մաղաքյան Նարինե	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Սարգսյան Անահիտ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ